«ՔԵՓԻԹԼ ՕՖ ՍԹՈՆՍ» ՍՊԸ

պետական գրանցման համար՝ 278.110.1487917

ՀՎՀՀ՝ 00541271

Հասցե՝ ՀՀ, Ք. Երևան, Արցախի փող, շենք 1, 2Ա

հեռ. +374 9142 20 47

էլ. հասցե՝ zalibekyan044@mail.ru

N - 1 /25

03.11. 2025 թ.

ՀՀ Արարատի մարզի Արարատ
համայնքի ղեկավար
պարոն Ա. Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան

«Քեփիթլ Օֆ Սթոնս» ՍՊԸ նախատեսում է ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական տարածքում իրականացնել օգտակար հանածոյի /տրավերտինի/ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Խնդրում եմ Ձեր լիազորությունների և իրավասությունների շրջանակում ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի համայքապետարանի շենքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել հանրային քննարկումներ՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի /տրավերտինի/ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

Հայցվող տարածքի հողատարածքի կադաստրային ծածկագիրն է՝ 03-002-0128-0125, իսկ հողերը հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր:

Միաժամանակ խնդրում եմ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ /խմբագրված 2023թ/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն

որոշմամբ սահմանված կարգի /խմբ. 28.12.2023թ թիվ 2343-Ն որոշում/ որոշմամբ սահմանված կարգի հանրային քննարկումների իրականացումից հետո ընկերությանը տրամադրել արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն կամ լուսանկարներ և նախնական համաձայնություն՝ ավազանու որոշմամբ՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

Խնդրում եմ վերը նշված Օրենքի և ՀՀ կառավարության որոշման դրույթների համաձայն ապահովել նաև շահագրգիռ հանրության մասնակցությունը:

Հանրային քննարկումների օրի, ժամի և վայրի վերաբերյալ խնդրում եմ լրացուցիչ տեղեկացնել ընկերությանը:

Կից ներկայացվում է՝

-ընկերության պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճեն,

- ընկերության կանոնադրության պատճեն,

-անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայականի պատճեն:

Կանխավ շնորհակալություն:

«Քեփիթալ Օֆ Սթոնս» ՍՊԸ տնօրեն Էմիլ Զալիբեկյան

Ընկերության ներկայացուցիչ /բնապահպանական խորհրդատու/ Զարուհի Զուռնաչյան,
հեռ +374 77 31 21 16 , էլ. հասցե՝Zurnachyanz@gmail.com